ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/35/1

ք. Վեդի «04» «նոյեմբեր» 2022թ.

«Վեդու համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Պատվիրատու), մի կողմից, և **«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Այվազյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Կատարող), մյուսկողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պաւտվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2 100 000 (երկու միլիոն մեկ հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը

գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց

---

[21]Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

[22]Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայության մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վեդու համայնքապետարան	**«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ**
ք. Վեդի,Թումանյան 6	Արարատի մարզ, գ.Ոստան,Երևանյան 13
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ900422102336	ՀՀ 1150015516686660
ՀՎՀՀ 04241258	ՀՎՀՀ 04234306
Համայնքի ղեկավար՝ Գ. Սարգսյան	Տնօրեն՝ Գ. Այվազյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

_____

Հավելված N 1
« _____» _____ 2022թ. կնքված
ՀՀԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/35/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ծառայության						մատուցման	
	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գումար/ ՀՀ դրամ	Հասցեն	Ժամկետը
1	71241200	ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Վեդի քաղաքային բնակավայրի Արարատյան 41, 43, 45, 47, 49/2 և Թումանյան 3/1, 3/3 փողոցների, Լուսառատ բնակավայրի 5 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություն	Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն Հավելված 1.ի	դրամ	1	2100000	Վեդի համայնք	Ֆինանսական միջոցների առկայության դեպքում երկկողմանի կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում

2. Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում	ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Վեդի քաղաքային բնակավայրի Արարատյան 41, 43, 45, 47, 49/2 և Թումանյան 3/1, 3/3 փողոցների, Լուսառատ բնակավայրի 5 բազմաբնակարան շենքերի **տանիքների հիմնանորոգման** նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների
Հիմնանորոգվող տանիքների մակերեսը	Վեդի քաղաքային բնակավայրի Աարարատյան 41,43,45,47,49/2 և Թումանյան 3/1, 3/3 փողոցների բազմաբնակարան բնակելի շենքերի 216 բնակարաններ, Լուսառատ բնակավայրի 5 տանիքներ
Նախագծման փուլը , նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման նորմատիվային պահանջները	Մեկ փուլ, աշխատանքային նախագիծ, համաձայն ՀՀՇՆ IV 11.05.02-99, ԳՕՍՏ 33100-2014, ԳՕՍՏ21.511-83 և ՀՀ Կառավարության 23.06.2011թվականի՝ թիվ 879-Ն որոշման հավելված 8 - Գործող գներով շինարարական աշխատանքների հաշվարկման կարգը: - ՀՀ կառավարության 19.03.2015թ. «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և« ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշում, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N263-Ն հրաման, - ՀՀԿԱՔՊԿ նախագահի 05.04.2018թթիվ 43-Ա հրաման, - ՀՀ

	քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ ՀՀՇՆ II-6.02-2006 թիվ 24-Ն հրաման, - «ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի շինարարական նորմերի հաստատման մասին» N253-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունիսի 16-ի N 41-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի փետրվարի 2-ի N 19-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N09-Ն հրաման, ՀԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրաման ՀՀ կառավարության 04.05.2017թ <Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և «ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 09-Ն հրաման, ՀԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրաման - ՀՀ կառավարության 04.05.2017թ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին » և «ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջների, - Լուսառատ բնակավայրի Մ.Մաշտոցի փողոց թիվ 13-6, 17-6, 20-6, 24-6, 15-9 և 22-9 բազմաբնակարան բնակելի շենքերի 162 բնակարաններ, 120 բնակիչներ կունենան բարեկեցիկ բնակարանների տանիքներ
Հետազննման և նախագծի նկատմամբ պահանջները	Չափագրական հետազոտություն ԳOUS 32868-2014 , Ինժիներաերկրաբանական հետազննություն համաձայն ԳOUS32869-2014, ՇՆ 1-2.01-99
Անհրաժեշտ փորձաքննություն	Պարզ փորձաքննություն

Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Վեդի քաղաքային բնակավայրի Արարատյան 41, 43, 45, 47, 49/2 և Ռումանյան 3/1, 3/3 փողոցների, բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների:

Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում

Ծրագրի իրականացումից հետո կունենանք Վեդի համայնքի Վեդի քաղաքային բնակավայրի Արարատյան 41, 43, 45, 47, 49/2 և Թումանյան 3/1, 3/3 փողոցների բազմաբնակարան բնակելի շենքերի վերարանորոգված տանքիներ

Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	**Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝** - Ճարտարապետահատակագծային առաջադրանք (-ներ) - Տեխնիկական սեյսմիկ փորձաքննություն Նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ), - Չափագրական հետազոտություն ԳOUS 32868-2014 , Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը: - Պարզ փորձաքննթության եզրակացություն(-ներ), Ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացույցային գրաֆիկը (ժամանակացույցը)
Նախագծի կազմը	**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ** **<u>Նախագծի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u>** **Ընդհանուր բացատրագիր** 1. Ինժեներական լուծումներ(գծագրական և տեքստային նյութեր՝այդ թվում մասնագրեր) 2. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ 3. Շինարարության կազմակերպման նախագիծ

	4. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ 5. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ **Համաձայնեցումներ** **<u>Նախագծի համաձայնեցում</u>** 1. Վեդու համայնքի քաղաքաշինության և հողաշինության բաժնի հետ ,
Այլ պահանջներ	***<u>Փորձաքննություններ</u>*** Քաղաքաշինական (պարզ) փորձաքննության եզրակացության ձեռքբերում՝ Պատվիրատուի կողմից, **Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ** - նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ - նորագույն տեխնոլոգիաների կիրառմամ պարտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները: Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային և ներդրին, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները: - Պարզ փորձաքննթության եզրակացություն(-ներ), **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում **5** օրինակ՝փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, Նախահաշիվը և **ծավալաթերթը ներկայացնել** էլեկտրոնային տարբերակով (Excel ձևաչափով) կնքված, կից լիցենզիայով և ներդիրով: **Նախագծային ամբողջ փաթեթները** պետք է պատրաստվեն **հայերեն և ռուսերեն** լեզուներով : **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)** Կատարողը ավարտված նախագծերի փաթեթները էլեկտրոնային եղանակով պատվիրատուին պետք է հանձնի պայմանագրի ստորագրման օրվանից ոչ ուշ, քան 20 օրացույցային օր հետո: Պատվիրատուն 2 օրացույցային օրվա ընթացքում պետք է ներկայացնի իր դիտողությունները, որից հետո կատարողը պարտավոր է իրականացնել բոլոր ուղղումներն ու փոփոխությունները և ամբողջությամբ ավարտական տեսքով նախագծանախահաշվային փաթեթները հանձնել պատվիրատուին /էլեկտրոնային և տպագիր տարբերակներով/ ոչ ուշ, քան 3 օրացույցային օր հետո:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վեդու համայնքապետարան
ք. Վեդի, Թումանյան 6
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900422102336
ՀԿՀՀ 04241258
Համայնքի ղեկավար՝ Գ. Մարգսյան

Կ.Տ (ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ
Արարատի մարզ, գ.Ուստաս,Երևանյան 13
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150015518686660
ՀԿՀՀ 04234306
Տնօրեն՝ Գ. Այվազյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«04» հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/35/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	***71241200***	ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Վեդի քաղաքային բնակավայրի Արարատյան 41, 43, 45, 47, 49/2 և Թումանյան 3/1, 3/3 փողոցների, Լուսառատ բնակավայրի 5 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություն	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	. 100.. %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վեդու համայնքապետարան
ք. Վեդի,Թումանյան 6
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ900422102336
ՀՎՀՀ 04241258
Համայնքի ղեկավար՝ Գ. Սարգսյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ
Արարատի մարզ, գ.Ոստան,Երևանյան 13
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150015516686660
ՀՎՀՀ 04234306
Տնօրեն՝ Գ. Այվազյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 3
«_04_» _հոկտեմբերի_ 2022թ. կնքված
ՀՀԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/35/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ
«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ
Արարատի մարզ, գ.Ոստան,Երևանյան 13
ՀՀ 1150015516686660
ՀՎՀՀ 04234306

Պատվիրատու
Վեդու համայնքապետարան
ք. Վեդի,Թումանյան 6
հհ 900422102336
հվհհ 04241258

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_04_» «_հոկտեմբերի_» 2022 թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/35/1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայության							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«_04_» _հոկտեմբերի_ 2022թ. կնքված
ՀՀԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/35/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող)միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն